ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ Խորհրդապաշտությունը «Սասնա ծռեր » էպոսում:

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Սերոբյան

Գյումրու թիվ 26 ավագ դպրոց ՊՈԱԿ

Ղեկավար՝ Լյուդմիլա Ներսիսյան

Գյումրի 2022

Բովանդակություն

Ներածություն…….3

Գլուխ 1-ին ։Թիվը և էպոսը …… 5

Գլուխ 2-րդ: Հավատալիքներն ու պաշտամունքները …… 10

Գլուխ 3-րդ: Ջրի խորհուրդը «Սասնա ծռեր» էպոսում----------17

Եզրակացություն……21

Օգտագործած գրականության ցանկ……22.

Ներածություն

Տարբեր ժամանակներում հայ ժողովրդական հերոսավեպը վիպասացների և բանահավաքների կողմից կոչվել է նաև « Սասնա փահլևաններ, «Սասնա տուն, « Ջոջանց տուն « Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, «Դավիթ և Մհեր, «Դավթի պատմություն, «Դավթի հեքիաթ՝ և այլն: Էպոսի հերոսներից Սանասարի և Բաղդասարի մասին հնագույն գրավոր ավանդությունը պահպանվել է Աստվածաշնչում (Թագավորաց 4-րդ ԺԹ), հետագայում Մովսես Խորենացու (Գիրք ԱԻԳ) և Թովմա Արծրունու(Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան) երկերում: Իսկ Դավթի և Խանդութի մասին զրույցների, Սասունում եղած իրեղեն ապացույցների հիշատակություններ կան 16-րդ դարի պորտուգալացի ճանապարհորդների(Ա. Տենրեյրո, Մ. Աֆոնսո) ուղեգրական նոթերում: Ուր հայկական աղբյուրների թռուցիկ հիշատակությունները վերաբերում են 19-րդ դարի հանդիպող վեպի հերոսների անուններով տեղավայրերին (Խանդութի ձոր, Խանդութի բերդ, Դավթի թշնամիների գերեզմանները Խլաթի մոտակայքում):

«Սասնա ծռերը մասամբ երգվող, բայց հիմնականում պատմողական բնույթի բանավոր մեծածավալ ստեղծագործություն է:

Դյուցազնավեպի ստեղծմանը մասնակցել են ժողովրդական վիպասացների բազում սերունդներ: Նրանց ստեղծագործական երևակայությամբ «Սասնա ծռերը՝ շարունակ հղկվել, հարստացել է նորանոր դրվագներով և բազմաթիվ բանավոր տարբերակներով հասել նոր ժամանակներին:

«Սասնա ծռերը՝ դյուցազներգության մեջ արտահայտված գաղափարներն ու տրամադրվածություններն համահունչ են ժողովրդի ազգային աշխարհընկալմանը: Սա հաստատվել է ստեղծագործության հազարամյա կենսունակությամբ:

«Սասնա ծռերը՝ ներկայացնում է ամբողջ ժողովրդի հավաքական մտածողությունն ու ձգտումները: Նրա աներեր կամքն ու ազգային բարոյական կողմնորոշումը:

«Սասնա ծռերը՝ էպոսը բաղկացած է չորս հիմնական մասից կամ ճյուղից: Դրանք կապակցված են գլխավոր հերոսների սերնդակցությամբ, նույն գաղափարով ու ոգով և մի կուռ ամբողջություն են: Ճյուղերը կոչվում են գլխավոր հերոսների անուններով՝ «Սանասար և Բաղդասար, «Մեծ Մհեր, «Սասունցի Դավիթ, «Փոքր Մհեր:

Էպոսի վիպասացների բուն հայրենիքը Վանա լճի ավազանն ու նրանից հարավ-արևմուտք և հյուսիս-արևելք ընկած գավառներն են՝ Սասուն, Մուշ, Բաղեշ, Մոկք, Շատախ, Վան, Հայոց ձոր, Խլաթ, Արճեշ, Մանազկերտ, Ալաշկերտ, Բայազետ: Հռոմեական 19-20դդ. գավառներից պանդխտած և գաղթած վիպասացների ու նրանց սերունդների միջոցով «Սասնա ծռերն,անցել է Արևելյան Հայաստան, մասամբ պարսկահայերի մեջ և Թիֆլիս: Դրանց լեզուն հիմնականում

արևմտահայ բարբառներն ու ենթաբարբառներն են, երբեմն նկատելի է նաև արևելահայ բարբառների ազդեցությունը:

«Սասունցի Դավիթէպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը՝ տիեզերավեպը, դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել նոր ժամանակներին ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեկան է և հուզիչ:

Այս գլուխգործոցում կան շատ հետաքրքիր մանրամասներ, թվային « խաղեր », հեքիթային հրաշապատում դրվագներ, հուզիչ երգեր, աշխույժ գործողություններ, գեղեցիկ նկարագրություններ, բազմաթիվ ու բազմապիսի հերոսներ, որոնք իրենց անուններում, գործողություններում, բնակվայրերում և ամենուր ամփոփում են բազմաթիվ գաղտնիքներ և խորհուրդներ, որոնք կփորձենք մեկնաբանել ու վերլուծել՝ ***հիմնախնդիր վերցնելով խորհրդանիշների, թվերի, հավատալիքների մասին տեղեկատվության և վերլուծության պակասը:***

Աշխատանքի ***նպատակն է՝***

Խորհրդապաշտության վերհանումն ինչպե՞ս է օգնում ընդգծելու էպոսի մեծությունն ու արդիականությունը: Նպատակի ուսումնասիրությունը կնպաստի կրթության բովանդակության նորացման հիմքում ընկած հանգուցային հետևյալ կարողունակությունների՝ սովորել սովորելու, թվային և մեդիա, լեզվական գիտելիք և գրագիտություն, ինքնաճանաչման և սոցիալական կոմպետենցիաների զարգացմանը

Հետևապես առաջադրում ենք հետևյալ նպատակները.

1. Կկարողանան ճիշտ վերլուծել այն, ինչ առաջին հայացքից պարզունակ է:
2. Կհասկանան էպոսի իրական մեծությունն ու արդիականությունը:

Գլուխ 1: Թիվը և էպոսը

Թվերի ընտրությունը աշխարհում պատահական չէ: Թիվ նաև տիվ, որից էլ տվայտվել, մասնատվել, տրոհվել, որից հետո միայն հնարավոր է մաշվել, հասկանալ, մասը հետազոտել: Թվերի հետ կապված իր դիտարկումներում աստվածաբան Հրաչյա Ավետիսյանն ասել է. «Թվաբանությունը կարծես կառավարում է մեր ողջ կյանքը, որովհետև մեր կյանքում ամեն ինչ հաշվարկված է: Աշխարհում ոչինչ պատահական չէ, քանի որ Աստված ամեն ինչ հաշվարկով է ստեղծել, ինչն էլ շատ խորը թվաբանություն է: 1-ը, օրինակ՝ աստվածային թիվ է և խորհրդանշում է Սուրբ Երրորդության մեկնությունը: 2-ը վկայության թիվն է, մեկի հետ միշտ պետք է լինի երկրորդը՝ որպես վկա, որպեսզի հավատան նրան: 3-ը խորհրդանշում է աստվածային երրորդությունը: 4-ը, 40-ը, 400-ը, փորձության թվեր են, իսկ 5 և 50-ը շնորհքի թիվ է

Քննարկենք **7-**ի խորհուրդը:

Սա կատարելության ցուցիչն է: Հայտնության գրքում Աստված ասել է, որ կան 7 հոգիներ: Վկայության խորանում, իսկ հետո նաև Երուսաղեմի տաճարում դրված է 7 մոմոերով աշտանակ՝ մենորա՝ հուդայականների մոմակալ:

Երբ բնակեցվելուց Նոյյան տապանը, 7 օր հետո սկսվեց ջրհեղեղը :

Յոթը օգտագործվում է որպես ամբողջականության գաղափարի խորհրդնիշ: Օկ.՝ Աստված իսրայելցիներին պատվիրել էր յոթ օր պտտվել Երիքովի շուրջ, իսկ վերջին յոթերորդ օրը յոթ անգամ/ Հեսու6-15/ : Կամ, մի անգամ Հիսուսը Պետրոսին ասաց , որ նա պետք է ների իր եղբորը « ոչ թե մինչև 7 անգամ, այլ մինչև 77 անգամ: Այստեղ 7-ի կրկնությունը փոխանցում է « առանց սահմանափակման՝ լինելու գաղափարը:(Մաթեոս 18:21):

7թվանշանը Աստվածաշնչում հանդիպում է 500անգամ :

Աշխարհի բոլոր մշակույթներում 7 հաջողություն բերող թիվ է: Բաբելոնացիներին միայն 7 մոլորակներ էին հայտնի, նրանց տաճարները 7 հարկաբաժին ունեին, և նրանց շաբաթն էլ 7 օր էր:

«Սասնա ծռեր՝ էպոսում Խալիֆը իր վրանները խփում է Նորագյուղ դաշտի մեջ, որտեղ Գագիկ թագավորը ամառանոց ուներ, 7օր հարսանիք է անում (ուշադրության է արժանի, որ այն ընդունելի էր նաև Խալիֆի կողմից): Կամ, երբ Խալիֆը հարձակվում է Հայաստանի վրա և 7

տարի պատերազմում՝ հավատալով, որ հաղթելու են, բայց 7 տարին աշխատում է հայերի օգտին, և հաղթում են նրանք:

07 Ֆրանսիայի Արդեշ դեպարտամենտի կարգային թիվն է:

Շատ ժողովուրդներ հավատում էին, որ 7-րդ որդու 7-րդ որդին յուրահատուկ ուժի տեր է լինելու: Սա նաև ժողովուրդների սիրած թիվն է և, քանի որ երջանիկ թիվ է համարվել, առածներում և ասացվածքներում ավելի հաճախ է հանդիպում, քան մյուս թվերը: Այն ոչ միայն առեղծվածային թիվ է, այլ բոլոր կրոնների խորհրդանիշը (7երկինքը իսլամում՝ արծաթե, ոսկե, մարջանե, ոսկեճերմակ, նռնաքարե, սուտակե, Աստվածային լույսի) : Հաճախ ենք հանդիպում 7օր, 7 մեծ տոներ, 7 մարգարեներ,7 մահացու մեղքեր և այլն: Մեծ նշանակություն ունի էքստրասենսոր ընկալման և աստղագուշակության մեջ: Այս ցուցանիշը ղեկավարում է ամենաարտառոց մոլորակը ``Սատուրնը: 7 թվի իմաստը կարելի է նկարագրել մեկ բառով՝`անկախություն: Սա թվային ամբողջ շարքից ամենաանկախ թիվն է, որը բնութագրվում է նաև հոգևորությամբ և ինքնաճանաչմամբ:

Սուրբ հոգու շնորհները 7 էին, որոնցով մարդն օժտված էր դրախտում և որոնցով էլ զարդարվում է մկրտությունից հետո, նաև 7 են հանցանքները՝ մեղքերի արմատները, որոնց մենք «մահացու մեղքեր» ենք անվանում. 5 զգայարաններով և հոգու 5 զորություններով է բնութագրվում մարդը: Աստված ստեղծեց աշխարհը և 7 օրը հանգստացավ: Դրա համար էլ մենք Աստծուց խնդրում ենք, որ մեր ննջեցյալին հանգիստ պարգևի (դրա համար ննջեցյալի յոթօրեքը հաշվում են թաղման օրվանից): Կամ, Տերը 6-րդ օրը մարմնով մտավ գերեզման և քանդեց դժոխքը, լուծարեց ապականությունը և ազատեց գերվածներին, իսկ կիրակի օրը՝ հարություն առավ: Նույնն էլ մենք ենք խնդրում մեր հարազատների համար:

7-ի կատարելությունը բազմիցս արտահայտվում է Սասնա հերոսների նկարագրությամբ: Ինչպես՝ երբ Մհերը լինում է 7 տարեկան, բոյը լինում է 7 շենք: Նրան վանք-վարժարան են դնում, մի քիչ սովորում է ու շնորհքով լցվում: Կամ, Մելքոն թագավորը, Քեռի Թորոսը , Հովանը ու մի շարք կտրիճներ Մհերի համար գնում են խնամախոսության: Թևաթորոսն ասում է, որ ինքը համաձայն է , բայց իր աղջիկը արդեն 7 տարի է՝ Սպիտակ Դևի գերի է: Երբ Մհերը ազատում է Արմաղանին, նա պատմում է իր գլխով անցածը, թե ինչպես 7 տարի է՝ այստեղ է, Դևը ուզել է կնության առնել, բայց ինքը չի համաձայնել: Հիմա էլ երազ է տեսել, որ շատը գնացել, քիչն է մնացել: Որ Մհեր անունով մեկը պիտի գա ու իրեն ազատի:

Մեկ այլ դրվագում , երբ Մհերը իր ուխտից հետ չմնալով՝ գնում է Իսմիլ Խաթունի մոտ, որը քաղցր խոսքով ու թունդ գինով արբեցնում է քաջին՝ 7 տարի պահելով իր մոտ: Նա Մհերից ունենում է մի արու զավակ և ի հիշատակ մեռած ամուսնու ՝ կոչում Մսրա Մելիք:

Մեր այբուբենում 7 համարժեք է « Է»-ին, որը էությունն է, քրիստոնեության հիմքն ու խորհրդանիշը:

40 թվի հետ կապված են բազմաթիվ ծեսեր, արարողություններ՝ մարդու ծնունդից մինչև մահ: Այս թիվն օգտագործվում է ինչ-որ բանի ավարտի նշանակությամբ: Իսրայեցիները եգիպտական փարավոնների կողմից ստրկացված են եղել 400տարի-10*40: Աստված իսրայելցիներին ստիպեց Սինայի անապատում թափառել 40տարի: Մովսեսը մահվան պահին 120տարեկան էր/40*03/: Նա 40 օր աղոթեց Սինա լեռան վրա: Հիսուսն անապատում 40 օր ծոմ պահեց: Ճիշտ նույնքան հետո՝ հարություն առավ: Հիսուսի համբարձումից 40 տարի հետո հռոմեացիների կողմից ավերվեց Երուսաղեմը:

Պետք է հասկանանք նաև , որ 40 են Մեծ Պահքի օրերը, որոնք մեզ մաքրագործում են, թե՛ մարմնավոր, թե՛ հոգևոր առումով: Որոշ դեպքերում 40-ը դատաստան իրագործելու կամ պատիժ իրականցնելու հետ կապված թիվ է (Ծննդոց 7:4 Եզեկելի 29:11.12):

Պատահակն չէ, որ էպոսի երրորդ ճյուղը սկսվում է այսպես.

Դառնանք, զօղորմի տի տանք

Դեղձուն Ճուղ Ծամին

-Քառսուն օղորմի:

Դառնանք, զօղորմի տի տանք

Քեռի Թորոսին

-Քառսուն օղորմի:

Ի հակադրություն.

Դառնանք, զօղորմի տի տանք

Չմշկիկ Սուլթանին

Չ' տանք օղորմի:

«Սանասար և Բաղդասար» ճյուղի դրվագներից մեկում, Սանասարն ու Բաղդասարը խնդրում են Թնաթորոս թագավորին, որ նրանց տա 40 չունևոր ընտանիք: Թագավորը նրանց տալիս է նույնքան ընտանիք, յուրաքանչյուրին ՝ մի էշ ու մի ճախարակ: Նրանք այնքան ուժեղ էին, որ 4 օրում կառուցում են 40 տուն և մարդկանց բնակեցնում այնտեղ: Կամ, էպոսի երկրորդ ճյուղում, երբ Մհերը զգում է իր սխալը , ու Մըսրից դարձյալ վերադառնում է Սասուն: Արմաղանը երդվել էր , որ 40 տարի Մհերը քառասունք պիտի պահի և չէր ուզում խախտել իր երդումը: Հայ իշխանների և վարդապետների խնդրանքներից հետո միայն, ներում ու ընդունում է Մհերին: Բայց նա նաև գիտակցում էր, որ եթե երդմնազանց են լինում, ապա պիտի մահանան:

«Սասունցի Դավիթ» ճյուղում, երբ Դավիթը հասնում է Սպիտակ Քար , տեսնում՝ ընկերները տխուր նստած են: Կանչում է հարիսա ուտելու, բայց նրանք չեն կարողանում ուտել: Դավթին ասում են , որ իր բացակայության ընթացքում 40 հարամի դևեր եկել են ու նախրից տարել 40 տավար: Դավիթը իր ձեռնափայտը դնում է թևին ու գնում: Հասնում է մի դաշտ, որի մեջտեղում ծուխ է տեսնում; Գնում է այդ ծխի կողմը, տեսնում է 40 հարամի դևերին, որոնք իրենց տարած 40 տավարը մորթել, լցրել են կաթսաները: Դավիթը դատարկում է դրանք կրակի վրա, 40 կաշին լցնում է պղնձի մեջ, գնում մտնում է նրանց քարայրը: Շուտով լուր է հասնում Սասուն, որ Դավիթը 40 հարամի դև է սպանել և կանչում է ժողովրդին, որ գան իրենց հարստությունը տանեն:

Նույն ճյուղի մեկ այլ տեսարանում Կոզբադինը խոստանում է, որ Մելիքին կբերի 40 բարձրահասակ աղջիկ, 40 ցածրահասակ աղջիկ, 40 ազապ աղջիկ և այլն:

Քառսուն էրկեն կնիկ բերեմ՝ ուղտեր բառնան,
Քառսուն կոլոտ կնիկ բերեմ՝ էրկանք աղան,
Քառասուն ազապ աղջիկ բերեմ քեզ արմաղան….

Երբ 1000 զինվոր հասնում է Սասուն, վրան են խփում դաշտում ու 40 մարդ են ջոկում զորքից, վերցնում են 40 ուղտ ու գնում են՝ Հովանից պահանջելու 7 տարվա հարկը: Իսկ Դավիթը ոլորում է այդ 40-ի վիզը:

Հիշենք նաև այն հատվածը, երբ Դավիթն ու Մելիքը կռվում են ու հերթը հասնում է Դավթին: Մելիքը նրան խնդրում է, որ տա 7 ժամ ժամանակ : Իսկ ինքը Իսմիլ Խաթունի խորհրդով գնում է, մտնում հողի մեջ, վրան դնում 40 գոմշի կաշի, դնում 40 ջրաղացի քար, վրան էլ վերմակ քաշում: Կամ, Դավիթի անեծքը լսելով՝ Միերը հեռանում է Կապուտկող 40 ազապ տղաների և 40ազապ աղջիկների հետ 7 տարվա գինի են դնում ու սկսում են խմել :

Թվերը իրենց մեջ հավաքագրում են տարբեր մշակույթներ ու կրոններ: Հիշենք հին հրեական առասպելներից մեկը, որը պատմում է մարդու առաջին սիրո և կնոջ առաջին դավաճանության մասին: Այս առասպելից է օգտվել նաև Ռաֆֆին՝ գրելով իր «Սալբի» վեպը: Ռաֆֆու մոտ Լիլիթը չարի մարմնացում է: Երբ Լիլիթը Ադամից խռովում և հեռանում է, վերջնս գանգատվում է Աստծուն: Աստված ուղարկում է իր 3 հրեշտակներին՝ Սանվի, Սասանվի և Սամանկալեֆ, ովքեր պիտի հաշտեցնեին Ադամին և Լիլիթին: Լիլիթը չի համաձայնում:Նրան ասում են, որ եթե նա չլսի Աստծուն, ապա ամեն օր Տիրոջ անեծքով նրա որդիներից 100-ը կմեռնեն: Հրեշտակները ցանկանում են սպանել անհնազանդ Լիլիթին, բայց նրան հաջողվում է համոզել նրանց և փրկվել: Նա արդարանում է, թե որոշել էր պատժել Ադամին և սպանել արու զավակներին նրանց ծնունդից 8 օր հետո, իսկ էգերին՝ 30 օր հետո, բայց համաձայնում է այդ չանել,եթե նրանց

անունները վերմակների վրա ասեղնագործած լինեն: Ըստ այդ ավանդության էլ ծնողները 40 օր դուրս չէին հանում երեխային ու իրենք էլ արևի երես չէին տեսնում:

30 թվին հանդիպում ենք էպոսի տեսարաններից մեկում , երբ Մելիքը չի ուզում լսել խելոք մարդկանց և խորհուրդ է անում «ջոկ» մարդկանց հետ:

Մելիք էլ էդ մարդերու հետ խորհուրդ չարեց,

Ջոկ մարդու հետ զրուցեց.

Ասաց.-Դուք ի՞նչ կասեք,

Մենք տի էրթանք Դավթի հետ կռիվ անենք:

Դավիթը նրանց անհանգստություն էր պատճառում, որովհետև նրանց միայն հպատակ ու ստրուկ ժողովուրդներ էին պետք: Ուստի, անհրաժեշտ է բնի մեջ խեղդել Դավթի ազատագրական ձգտումները, քանի դեռ նա, ինչպես նրանք են ասում, 20 տարեկան է և չի դարձել 30 տարեկան: Որովհետև 30 համարվում է կատարյալ տարիք:

Չի կարելի չնշել 3-ի խորհուրդը: Ըստ Եզնիկ Կողբացու, աշխարհում չկա 2 գաղափար, որովհետև եթե կա 2-ը, ուրեմն կա 3-րդը, որը բաժանում է այդ 2-ը: Հետևաբար բոլոր հասկացությունները պետք է սկսել երեքից: Այն ցուցանում է ամբողջականություն: Սատանան Հիսուսին փորձության ենթարկեց 3 անգամ, Աստվածաշնչում 3 հրեշտակ է հիշատակվում՝ Միքայել, Գաբրիել և Լյուցիֆեր: Խաչելության պահին Հիսուսը 33 տարեկան էր ու նաև Հարություն առավ 3-րդ օրը:

Հեքիաթների վերջում երկնքից միշտ երեք խնձոր է ընկնում.: Հեքիաթը պատմվում էր այն ժամանակ, երբ կար 3 ատրիբուտը ՝ Ասողը, Լսողը և Ականջ դնողը՝ իմաստությունները փոխանցողը:

Իզուր չի 3 գլխանի, 7 գլխանի և <u>9</u> գլխանի դևերը: Կամ, հրեղեն հերոսի ծնունդը փաստող թվերը՝9 ամիս, 9 շաբաթ, 9 օր(999), որը հակադրությունն 666 թիվն է: Երեք 9-ի գումարը հավասար է 27-ի, որի հանրագումարը ևս հավասար է 9-ի(2+7=9): 9-ը էպոսում բարձրագույն թիվ է, որը իր մեջ կրում է խորհուրդ, և նրան կրողին դարձնում է ամբողջական, ուժեղ , իմաստուն և զորեղ: 9-ը լիարժեք է , երբ բաղկացած է 3 խիստ տարբերվող բաղադրիչներից: 666 հանրագումարը հավասր է 18, որը ևս 9 է(1+8=9): Հետևաբար, 666 մասին ունեցած կարծրատիպերը արդարացված չեն: Նույնիսկ հնում 666 համարվել է արևի թիվը:

Պիտի նշել, որ 6-ը նյութի հաղթանակն է, իսկ 9-ը հոգևորն է: 6-ը Աստվածաշնչում օգտագործվում է «ոչ կատարյալ՝ իմաստով:

Շատ հատկանշական է 1-ի գաղափարը՝ միություն: Օկ՝ Հիսուսը աղոթեց Աստծուն, որ իր հետևորդները « ***մի*** լինեն, ինչպես որ դու, Հա՛յր, միության մեջ ես ինձ հետ և ես միության մեջ եմ քեզ հետ»:(Հովհաննես 17:21 Մաթեոս 19:6)

Նումերոլոգները պնդում են, որ 1-ը աստվածաշնչյան գլխավոր թիվն է. չ՞է որ կարևորագույն բոլոր գործողությունները կատարվել են միայնակ (Աստվածաշնչում Մովսեսի կամ Հիսուսի կողմից):

1թվի օրինակ կարելի է նշել էպոսի այն դրվագը, երբ Դավթին տանում են Մելիքի խաղը նայելու: Անգործությունից հոգնած, Դավիթը սկսում է խաղալ հողի հետ: Գլխարկով վերցնում է հողը և լցնում մի կողմ՝ ասելով՝ մեկ, մեկ: Դավիթը շարունակ կրկնում է այս գործողությունը: Սա չի խոսում այն մասին, որ Դավիթը հաշվել չգիտեր: Նրա արածը (ժամանակակից մարդու լեզվով) նման էր մեդիտացիայի, այլ կերպ ասած՝ կենտրոնացման: Մեկը ամբողջ է, ոչնչի՝ հակառակը: Այլապես , երբ Մելիքը 366լիտր կշռող մի գուրզ է նետում, որ սպանի Դավթին(մանավանդ որ Դավիթը չլսելու էր տվել Մելիքի կանչը ու իր տեղից վեր չէր ելել), Դավիթը բռնում է այն ու ասում, որ դա իր համար շատ թեթև է: Սա էլ խայտառակում է Մելիքին: Բոլոր ճյուղերում իրադարձությունները հանգուցալուծում է **1-ը՝ Նա՝ Ազգի որդին:**

Էպոսում գախափարներ կան 5-ի, 50-ի, 10-ի, 500 և շատ այլ թվերի մասին:

Գլուխ 2 : *Հավատալիքներն ու պաշտամունքները*

Աշխարհարարման մասին որոշակի տեղեկություններ ևս պահպանված են էպոսում: Գրեթե բոլոր կրոնները հավաքված են այստեղ: Նախ, ինչ է ասել. « Ի սկզբանե էր Գագիկ թագավորը և կռապաշտ Խալիֆը: Տարբեր ուսմունքներում , կրոններում , օր.՝ չինական Ին-Յանը, հրեական վեցթևյա աստղը, խաչը, բոլորը երկակիության խորհուրդ են կրում՝ երկու բևեռների խորհուրդը: Խաչի մեջ ուղղահայաց և հորիզոնական բևեռներ են, հրեական աստղի մեջ եռանկյունին, որից մեկը դեպի վերև է ցույց տալիս, իսկ մյուսը՝ ներքև, իսկ Արևելյանն էլ սև կետը սպիտակի մեջ, իսկ պիտակը՝ սևի: Նույնն է հայկական արևխաչը՝ձախից աջ կամ աջից ձախ: Այսինքն՝ « Ի սկզբանե էր Գագիկ թագավորը և կռապաշտ Խալիֆը՝ լույսը և խավարը, ամուրը և փափուկը : Նրանք խորհրդանշում են ծայրահեղ հակադրությունների

փոխազդեցությունը՝ լույսի և խավարի, գիշերվա և ցերեկվա, արևի և լուսնի, երկնքի և երկրի, ցրտի և տաքության, դրականի և բացասականի, զույգի և կենտի և այլն: Սրանց մեծամասնության բովանդակության հիմքում ընկած է բևեռային ուժերի փոխազդեցության հայեցակարգը, որտեղ դրանք դիտարկվում են որպես տիեզերական հիմնական շարժման ուժեր, բնության մշտական փոփոխականության սկզբնական պատճառներ:

Անհերքելի է ***երկվորյակ եղբայրների*** պաշտամունքը: Ինչպես էպոսում Ծովինարի երկու ջոջ ծնելը: Հույն աստվածները և կայսրերը ևս ունեին երկվորյակ եղբայրների պաշտամունք: Հույն պատմիչներ Արիանոսը և Ռուֆուսը պատմում են, որ Ալեքսանդր Մակեդոնացին զոհ էր մատուցում երկվորյակ եղբայրներին, ովքեր արևելքից էին և ջոջեր էին:

Խաչ Պատերազմին- *« Հիշա՛, Մարութա բարձր Աստվածածին, Հիշա՛զ Խաչ Պատերազմին…՝ Սա էպոսի պատգամներից է, որը էպոսում արծարծվում է դիցհերոսների բազմիցս կրկնվող երդումներում ու հիշեցումներում՝« Յա Մարութա բարձրիկ Աստվածածին,/ Խաչ Պատերազմի ն, վեր իմ աջ թևին/, Հիշեմ քեզ հեր կենդանին/ Խաչ Պատերազմի ն, վեր իմ աջ թևին՝ և այլն:* Ինչպես տեսնում ենք, Խաչ Պատերազմին միշտ Տեր Կենդանիի՝ Արարիչ և Աստվածամայր խորհուրդների հետ է հիշատակվում:Սա ասում է այն մասին, որ նրանք, ըստ էպոսի տիեզերական խորհուրդների, նույն ընտանիքին են պատկանում: Տեր Կենդանին Արարիչն է, իսկ Խաչ Պատերազմին՝ արարող ուժի, զորության , էներգիայի ու հաղթության արտահայտումն է:

Արդեն գիտենք Սանասարի երազի, երազում՝ Աստվածամոր հայտնության մասին: Առաջին Բանը,որ Աստվածամայրը Սանասրին հայտնում է՝ լինում է Խաչ Պատերազմին. Ասում է. « Հե՛յ Սանասար, էլի վե՛ր:/ Խաչ պատերազմին էստեղ է./ Էլի՛ յոթ ծունր, աղոթք առջև արա./ Արժանի ըլնիս, քեզ կը հասնի,/ Դնես վեր քո աջ թևին, որ դարբ չառնի՝: Խաչ Պատերազմիից հետո Աստվածամայրը Սանասարին ասում է նաև մյուս՝ դիցազնացման պայման բաների (Քուռկիկ Ջալալու, Թուր Կեծակի, զենք-զրահի, աբյուրի ջրի) մասին, բայց քանի որ առաջինը հենց Խաչ պատերազմի մասին է ասում, ապա դրանից հետևում է , որ դա է ամենագլխավորը:[1]

Հետո Սանասարը յոթ անգամ պիտի ծնկի իջներ ու աղոթեր, որ արժանի լիներ այն կրելուն: Միայն դրանից հետո նա կդյուցազնանար ու էլ « դարբ» չէր առնի:

Դավթի ճյուղում Դավիթը հորեղբորից՝ Զենով Հովանից իր հոր՝ Մհերի Խաչ Պատերազմին է պահանջում: Նա պատասխանում է.« Ես չեմ կարնա տա/ Թե արժանի ես՝ կը գա քո թևին./ Թե արժանի չես՝ չի գա քո թևին»: Այնուհետև Աստծո հրամանով Խաչ

Պատերազմին իջնում է Դավթի աջ թևին, որից նա , թե ի բնե էր հրեղեն , թե իրականում է այդպիսին դառնում:

Էպոսում Խաչ Պատերազմին իր պատժողական գործառույթի մեջ է պատկերվում: Նույն ճյուղում հայր և որդի՝ Դավիթ-Միհեր կռվից հետո Դավիթը քննելով –վերհանելով կռվի բուն պատճառը՝՝ասում է.« Էն չէր Միհերի զարկեր կը գար վեր իմ գլխուն,/Էն ԽաչՊատերազմին էր ինձի կը զարկեր »: Բանն այն է, որ մինչ կռիվը Դավիթը Չմշկիկ Սուլթանի հետ կռվի պայմանավորվածություն էր ձեռք բերել: Դա՝ Խաչ Պատերազմին երդումով հաստատելն էր, իր այդ պայմանավորվածությունն էլ , երդումն էլ հետո մոռացել էր, որի համար էլ Խաչ Պատերազմին նրան « զարկել»էր: Այլ կերպ ասած՝ էպոսի Խաչ Պատերազմին(նույն ինքը՝ երկնային Հուր Զորությունը), երբ իր նվիրյալ դիցազունների (իր երկնային հարազատների) վարք ու բարքում հավատքային շեղումներ է տեսնում, դրան հետևում է պատիժը: Ի դեպ, էպոսում Մեծ Միհերի և նրա կնոջ՝ Արմաղանի մահն էլ է բացատրվում երկնային ուժերի՝ իրենց մեջ դրած վարք ու բարքի օրենքներին հետամուտ չլինելու հանգամանքով : Միհերը ևս իր «սերմից» իր համար«ցեց » էր ստեղծե ՝ (Նա գինովցած պառկել էր Իսմիլ Խաթունի հետ, որից ծնվել էր Փոքր Մելիքը)՝ այդպես խախտելով Խաչ Պատերազմիի նկատմամբ իր հավատքը: Բացի այդ՝ նա խախտել էր հայ ընտանիքի հովանավոր Աստվածամոր սահմանած՝՝հայ ընտանիքի օրենսդրությունը, իսկ Արմաղանը դրժել էր նրան տված երդումը՝« էրդմնակոտոր » էր եղել:[2]

Այսպիսով՝ <u>Խաչ Պատերազմին էպոսում խորհրդանշում է տիեզերական, աստվածային ուժերի մեջ ամենազորեղ՝ արարող ուժը, ուժ, որը պայմանավորում է հավատքի ու կյանքի զորությունը, հաղթելիությունն ու մշտական լինելիությունը, երբ նրանք հավատարիմ են իրեց տրված այդ աստվածային ուժին և « զարկվելը» , երբ անհավատարիմ են:</u>

<u>Խաչը</u> քրիստոնեական խորհրդանիշ է և պաշտամունքի առարկա շատ կրոններում, որը և բազմաստված կրոններից անցել է միաստված կրոններին: Բուդդայականները խաչով զարդարում էին «Բուդդայի ոտնահետքերը» և խաչը պատկերում էին իրենց հմայիլների մեջ: Քրիստոնեությունը ևս յուրացրեց Խաչի խորհրդանիշը և այն կապեց Հիսուս Քրիստոսի խաչելության հետ: Խաչի սուրբ խորհրդանիշ լինելը ճանաչում են ուղղափառությունը, կաթոլիկությունը, լյութերականությունը: Որոշ քրիստոնեական ուղղություններ չեն ընդունում խաչի սրբությունը, օկ.՝ բապտիստները, ադվենտիստները և մի շարք այլ բողոքական դավանություններ:

Հին աշխարհում Խաչ Պատերազմին անվանել են նաև մսե խաչ, սուրբ նշան, խաչ պատրազ ին, որը պատկերացվում է իբրև հերոսի թևին դրոշմված մի խաչ, որ համայիլի դեր է

կատարում և կոչվում է հենց նաև « հմայիլ սուրբ խաչ» : Նա հերոսին ոչ միայն տալիս է մեծ ուժ, այլև պաշտպանում է հարվածներից: Ինչպես՝ Դավիթը ձին քշեց, գնաց հասավ Պողպատե տանը. Կանչեց.« Մարութիկ Աստվածածին, Խաչ Պատրազին, Թուր Կայծակին, զարկեմ, կտրի Պողպատե սին»: Ու խաչի զորությամբ կտրեց այն:

Էպոսում ոչինչ պատահական չի ընտրված:

1. **<u>Անունները</u>**

Հայ դյուցազներգության հերոսների անունները դիցաբանական իմաստ և բացատրություն ունեն: Օրինակ՝Սանասար անունը կազմված է սան (ծնունդ, ծին, զավակ) և սար (գլուխ, գագաթ, բարձունք՝ ուղիղ իմաստով, և վեհ, գլխավոր՝՝ փոխաբերական իմաստով) [1] բառերից և հայ դիցաբանական պատումներում ունի Վեհածին, Բարձրյալ, բարբառային տարբերակով՝ Ջոջ նշանակությունը: Քանի որ Սանասարի մայրը երկնային զորությամբ էր հղիացել, ինչպե՞ս կարող էր էպոսաստեղծ ազգն իր հերոսի անվան ու հետևաբար բնույթի մեջ աստվածային բացարձակության խորհուրդը չտեսնել: Ասվածն ավելի որոշակի է էպոսի մյուս դիցհերոսի անվան պարագայում. «Միհր՝-ը հայոց դիցարանի՝ օրենք-օրինաչափության ու արդարադատության, ուխտի ու դաշինքի Աստված Միհրն է: Հայոց դիցազներգության այդ անունն էլ, պարզ է, դիցաբանական իմաստ է պարունակում. լեզվաբանորեն բառանունը կազմված է մ հունչարմատով (պահպանումի, հաստատումի իմաստ է արտահայտում), ահ (մեծություն, հզորություն) և ար (սերում, արարում) բառարմատներով [2] և նշանակում է արարչական արարումը պահող-պահպանող, հաստատող: Անցնենք, սակայն, էպոսի՝ մեզ հետաքրքրող մյուս՝ Դավիթ անվանը, որի դիցաբանական ծագումն ու իմաստը առաջին հայացքից (կամ, ավելի ստույգ, ժամանակակից ընկալմամբ) այնքան էլ որոշակի չեն:

Դավիթը արխայիկ անուն է, արիական անուն: Եվ պատահական չէ, որ աստվածներին անվանում էին դևեր (հունարեն զեոս , որից էլ Զևս), որը նշանակում է մաքուր, սպիտակ, կուսական, Աստծուն սիրելի: Դավիթ- դավ, դեվ , որից էլ դեոլոգիա(աստվածաբանություն) եզրույթը :

Այս կապակցությամբ հիշենք մեր մեծ գրողի՝ Ավ. Իսահակյանի առաջարկած, շատ բան ասող, բայց, ցավոք, էպոսագիտության մեջ անտեսված «հիպոթեզը». «Ո՛չ իբրև պարադոքս, այլ իբրև հիպոթեզ պիտի ասենք, որ «Դավիթ» կոչումը գալիս է չափազանց շատ խորին հնությունից: Հնդկական վեդաների մեջ աստվածների ընդհանուր անունը Դյավ (ճիշտը Դևա-ն է, քանի որ այնտեղ deva է գրված - Ս. Մ.) է, որը նշանակում է ամենազոր, լուսավոր, պայծառ… Կարելի է մտածել, որ Դավիթ անունը հոմանիշ չէ բիբլիական նշանավոր հովիվ թագավորի՝ Դավթի հետ, այլ, հավանաբար, վերջինս էլ նույն վեդայական աղբյուրից է ծագել» [3] : (Դևա-ն),

որը հնդկական դիցաբանության մեջ նշանակում է աստվածների ողջ դասը, Ռիգվեդայի լեզվով՝ «բոլոր աստվածներին» (դասն ընդգրկում է 33 աստվածների, որոնք բաժանվում են երկնային, մթնոլորտային և երկրային աստվածների) [4] :

2. <u>Էպոսն ու Աստվածաշունչը</u>

Բազնաթիվ օրինակներ կան, երբ էպոսի հերոսները իրենց գործողություններով հիշեցնում են կամ հաստատում Տիրոջ՝ Քրիստոսի պատգամները: Երբ Լեռան քարոզի ժամանակ Հիսուսն ասաց.« Լսել էք՝ ինչ ասուեց.« Աչքի փոխարեն ՝ աչք և ատամի փոխարեն՝ ատամ»: Իսկ ես ձեզ ասում եմ. «Չարին հակառակ չկանգնել, այլ եթե մեկը քո աջ ծնոտին ապտակ տայ, նրան միւսն էլ դարձրու»:(Մաթեոս 5:38-39) : Այս տողերը բնավ չեն նշանակում, որ քո ու քո հարազատների վրա հարձակման դեպքում անպաշտպան կանգնես ու սպասես, որ քեզ ոտնահարեն: Հետաքրքիր է, բայց Մերձավոր Արևելքի երկրներում նմանատիպ ապտակ կարող էր տալ հայրը որդուն, եղբայրը՝ եղբորը, մի խոսքով հարազատը՝ հարազատին: Ուստի հարազատի , եղբոր ապտակին ապտակով պատասխանել պետք չէ:

Հիշենք Սանասարին, ով Կաթնաղբյուրից զորացած դուրս է գալիս , իսկ Բաղդասարը նրան չի ճանաչում: Բաղդասարը սկսում է խփել Սանասարին, բայց նա չի պատասխանում, որովհետև հասկանում է, որ մի զարկով կսպանի եղբորը:

Չի կարելի չհիշել Ծովինարին, ով տիեզերական ծնունդի խորհուրդն է ամփոփում, անարու, չգոյից ծնունդի, որը հետագայում փոխ առավ նաև քրիստոնեությունը. Չէ՞ որ, համաձայն քրիստոնյա-եբրայական ավանդության, Մարիամն էլ հղացավ Հիսուսով առանց տղամարդու հետ կենակցման ակտի, սուրբ հոգուց: Եվ Ծովինարը ոչ միայն երկրային ջրերի՝ ծովերի տիրակալն էր, այլև Ծով-Ծիրանիի՝ տիեզերքի և անհունի: Քրիստոնեական վառ դրսևորումներից մեկի ապացույցն այն էր, որ Ծովինարը ամուսնանում է Բաղդադի խալիֆի հետ, որը մահմեդական էր (էպոսում՝ կռապաշտ), և Ծովինարը իր հետ օտար երկիր է տանում քահանա՝ ցմահ շեշտելով քրիստոնյա մնալու ձգտումը: Ավելին, Ծովինարի խնդրանքով քահանան Բաղդադում Սանասարին ու Բաղդասրին հայերեն գրել- կարդալ է սովորեցնում:

Սանասար ու Բաղդասար պետ կտրիճներ դարձան,
Մերն ասաց քահանային.- Տե՛ր տեր,
Իմ տղաներին դաս տուր՝ կարդան:
Դաս ետու տղաներին,
Էնոնք գրել-կարդալ սովորեցին:

Էպոսի բոլոր ճյուղերն էլ սկսում են ողորմիների շարանով՝ ուղղված տվյալ ճյուղի հիմնական գործող անձանց: Հայ ժողովուրդն այնքան արդարադատ ու մեծահոգի է, որ ողորմի է ասում անգամ թշնամուն՝ Իսմիլ խաթունին՝ չուրանալով, որ նա է մեծացրել մանուկ Դավթին: Ու եթե իր սիրելի անձերին տալիս է հազար օղորմի օրհնանքը, ապա Իսմիլ խաթունին գոնե մեկ օղորմի է տալիս:

Իսկ Էպոսի գլխավոր դեմքը՝ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ, ով անսահման ուժի տեր էր և ում նետած գուրզը դեռ շարունակում է թռչել տիեզերքում, ամենահասարակն ու մտերիմն էր հայ գեղջուկի: Ով իր պապի՝ Սանասարի նման, առաջինը աղքատների ու աշխատավորների համար էր կացարաններ կառուցում և հետո միայն մտածում սեփականի մասին: Այսինքն՝ էպոսի գլխավոր նպատակը մարդասիրության դաստիարակումն է(Ավետարանում ևս).

Բաղդասր պատասխանեց.

-Առաջ շինենք զէդոնց տներ,

Հետո շինէնք զմեր բերդ.

Էդ խեղճ մարդեր չեն կարնա

Արևուն առջև կենա:

Ու սկսեցին զտներ:

Հիշենք ևս մի հատված « Սասունցի Դավիթ » ճյուղից:

Դավիթի ուժից սարսափած՝ մեծամեծները կանչում են Հովանին և ասում, որ Դավիթը մի գործ դնի: Դավիթը դառնում է գառնարած, նախրորդ, բայց չի ճանաչում ընտանի կենդանիներին ու վայրի գազաններին էլ նրանց հետ հավաքում ու բերում է քաղաք: Արտերև սա խոսում է Դավիթի նայիվության կամ ծռության մասին: Սա միայն թվում է: Ուշագրավ է (էպոսում հստակ երևում է) , որ ոչ մի վայրի գազան չէր հոշոտել և ոչ մի անասունի: Սա վկայում է այն մասին, որ ընթերցողին տեսանելի է միայն արտաքին քողը: Իրականում Դավիթը նույն Քրիստոս-Հովվի նախատիպն է, ով իր մոտ է կանչում բոլորին, և ում մոտ տիրում է հավասարությունն ու խաղաղությունն : «Ինձ մոտ եկեք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և ես հանգիստ կտամ ձեզ: Ձեզ վրա առեք իմ լուծը և ինձանից սովորեցեք. Որովհետև ես հեզ եմ և սրտով խոնարհ. Եվ ձեր անձերի համար հանգստություն կգտնեք: Որովհետև իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև» (Մատթևոս 11.28-30):

Էպոսում կա *աշխատավոր մարդու նկատմամբ հատուկ պաշտամունք*: Սասնա դյուցազունները ապրում են հենց այդ գիտակցությամբ: Նրանք պարզությամբ

տիրապետում են ամենահամեստ արհեստներին, բարեկամանում են խեղճերի հետ, կամովին ձեռք են մեկնում հոգնած գեղջուկներին, նույնիսկ, եթե նրանք ճանապարհին հանդիպած օտարականներ էին:

Հատուկ ուշադրության պիտի արժնացնել էպոսի այն հատվածը, երբ Դավիթը վերշինում է Մեծ Միհրի կառուցած Մարութա վանքը, սակայն ամեն առավոտ վանքն վերակառուցող վարպետներն իրենց կառուցածը գտնում են քանդված: Ոչ ոք չէր կարողանում բացատրել դրա պատճառը: Մինչև որ Դավիթը երազ է տեսնում, և երազում Աստծո հրեշտակը նրան հրահանգում է եկեղեցու պատի մեջ դնել Դավթի սուրը: Սա խիստ խորհրդանշական դրվագ է: Դեռևս 4-րդ դարից՝ `Շապուհ Երկաբակյացի օրերից մինչև 20-րդ դարասկզբի Մեծ եղեռնը, հայ ժողովուրդը կռիվ է տվել իր ինքնության, կրոնական դավանանքի, անկախության համար՝ մղելով անհաշվելի ազատագրական կռիվներ: Ահա էպոսի համապատասխան դրվագը.

Էն գիշեր կը քնեն, Դավիթ կըտեսնա՝
Մարութա բարձր Աստվածածին կը գա էրազ,
Կ'ասի.«Քո թուր քո մեջքեն քաշի
Իմ հիմ քո թրի վերա ձգի,
Օրէ մի կը շինես, կը թամամցես, պատարագ մեջ վանքիս կը մատուցես,
Որ ես վեր իմ հիման կանգնեմ… »:
Դավիթ զարթնավ, տեսավ՝
Մարութա բարձր Աստվածածին չկա:
Քար իր տեղն է գնացե, հողն իր տեղն է գնացե,
Ավազ, կավ ու ինչ որ պատրաստություն կար՝
Ամենն իր տեղն է գնացե:

«Սասունցի Դավիթ» էպոսում կա այն ճշմարիտ միտքը, թե նվաճողներն ու բռնակալներն են հրահրում պատերազմներ: Հասարակ ու հավատավոր մարդիկ այդ պատերազմի հետ կապ չունեն, ավելին, նրանք դեմ են պատերազմին: Սա էպոսի գաղափարական հարստության այն կետն է, որն առկա է միջնադարյան հայ մատենագրության, ինչպես նաև հայ գրականության մեջ: Հիշենք Հ. Թումանյանի «Հառաչանք » պոեմը, Ս. Զորյանի « Ջրհորի մոտ »պատմվածքը:

Խաղաղ ապրելը նաև Աստվածաշնչյան մեծագույն պատգամներից է: (Այս համեմատական զուգահեռները հայ գրականության ուսուցչին օգնում են ամրապնդել հին ու նոր գիտելիքները):

« Հառաչանք»

Երեք Թագավոր, ասում են, իբրև,
Խելքս չի կտրում , որ էսպես լինի,
Խորհուրդ են արել, որ այսուհետև
Իր թախտից զըրկվի , ով կռիվ անի:

Հիշենք ևս մի դրվագ, որը մարդասիրության, արդարամտության, շենքի ու շնորհքի մասին է վկայում (ծերությունը, իմաստությունը հարգող մարդու փառաբանում): Մսրա Մելիքը խոր քուն էր մտել իր վրանում , մինչդեռ իր զորքը կոտորվում էր: Հետաքրքիր է, որ իր յոթ տղաների հետ կռիվ եկած արաբ ծերունին նախապես համոզված էր, որ Դավիթն կդադարեցնի կռիվն ու կոտորածը և զենքը կուղղի Մսրա Մելիքի դեմ.

Մըսրա Մելիքի զորքի միջեն մարդ մի էլավ,-
Մեկ ալևոր-յոթ տղու հետ:
Մելիք էնոր յոթ տղեկներ զոռովե՛ն էր բերեր կռիվ:
… -Ճամփա՛ տվեք , էրթամ Դավթի առաջ:
Մի խոսք ասեմ, էսա զորք ազատեմ կռվից:

«Սասունցի Դավիթ՝ էպոսում հնչող ծերունու այս խոսքերն ասված են բոլոր ժամանկների համար: Դրանք արդիական են նաև այսօր: Արաբ ծերունու խոսքում տեսնում ենք հայ ժողովրդի՝ պատերազմը դատապարտող հավաքական խոսքը: Նախ, ծերունին բացատրում է, թե նրանք՝ այսինքն արաբ զինվորները, մարդիկ են: Մարդը մարդուն իրավունք չունի կյանքից զրկելու(**Մի՛ սպանիր),** բացի այդ, կա հարազատի կյանքի կորստի համար նրա արյունակիցների անանց վիշտը: Այդ զինվորներն ունեն ընտանիք, կին, երեխաներ: Ո՛րն իր մոր մինուճար զավակն է, ո՛րն ընդամենը նոր է ամուսնացել, ո՛րն էլ օջախի սյունն է, և բոլորին էլ Մսրա Մելիքը ուժով ու ստիպելով բերել է պատերազմ:

<u>Հացն ու Գինին, Տեր Կենդանին</u>

Ինչքան էլ տարօրինակ հնչի, բայց սա ունի նախաքրիստոնեական պատմություն և գալիս է անհիշելի ժամանակներից: Հայ մարդու համար հացն ու գինին եղել է պաշտամունքի առարկա դեռևս նախահեթանոսական շրջանում: Հացն ու գինին ունեն նաև այլաբանական խորհուրդ: Հացը իրենից ներկայացնում է հոգի, իսկ գինին՝ ոգի: Եթե ալքիմիական տերմինաբանությամբ սա ասվեր, ապա հացը կլիներ արևը, իսկ գինին՝ լուսինը(գինին համարվում է լուսնային խմիչք, որովհետև առանց եռացվելու է ստացվում և մարդու կողմից կրակ չի տեսնում): Այն նշանակում է նաև ոսկի և արծաթ, որոշ

առումով՝ արական և իգական սկիզբ: Տերը- հայերենում Տիր աստծու անվանման տարատեսակն է : Կենդանին- կենդան կամ կեն հնագույն արմատ է՝ պահպանված հնդարիական լեզվում, որը կյանքն է, կենաց ծառը: Քրիստոնեությունը ևս հաստատում է հացի ու գինու լինելիության նախաքրիստոնեական խորհուրդը Օր.՝ Մելքիսեդեկ քահանան , ով Հին Կտակարանում հանդիպում է Աբրահամին և նա տասանորդ է տալիս Մելիքսեդեկ կամ Մելքիսեդկին և ասվում է , որ նրա ձեռքին կար հացն ու գինին: Հիսուսի խորհրդավոր ընթրիքը ևս (Հացն ու Գինին , Տեր Կենդանին) գինին արյունն էր, այսինքն՝ կենարար ուժը, իսկ հացը ՝ մարմինն , բայց նրա մարմինը սովորական մարմին չէր, այլ հոգևոր էր, այսինքն՝ հոգու խտացում էր, և մենք բազմիցս տեսնում ենք դա (ձեռքերը մեխերից հետո անցքեր ունեին կամ ջրի վրայով քայլելը և այլն):
Հացն ու Գինին, Տեր Կենդանին բանաձև է, որը պիտի գործի մեր բոլոր նախաձեռնություններում:

Գլուխ 3: Ջրի խորհուրդը «Սասնա ծռեր էպոսում

Հայ ժողովուրդը ջրապաշտ ժողովուրդներից է: Այն գալիս է մեր ազգային էությունից և մտածելակերպից: Ջուրը հին հայերի պատկերացմամբ եղել է հեթանոսական չորս մեծ տարերքներից (հող, օդ, ջուր, կրակ) մեկը: Ջուրը կյանքի կենարար աղբյուրն է և հարատևության երաշխավորը: Հնում ջրի պաշտամունքին են նվիրված եղել աստվածներ, տաճարներ, տոներ, ծեսեր և ավանդույթներ: Ջրին վերագրվել են մաքրագործման և երկարակեցության հատկանիշներ: Այդ պատճառով էլ հաճախ համադրվում են աղբյուր և երկարակեցություն բառերը: Հայ ժողովրդի մեջ ջրապաշտության ամենամեծ ապացույցներից մեկը թերևս մեր ազգային «Սասնա ծռեր» դյուցազնավեպի գլխավոր հերոսների՝ Սանասարի և Բաղդասարի և հայոց ուժն ու իշխանությունը խորհրդանշող Քուռկիկ Ջալալիի և Թուր Կեծակիի ջրածին լինելն է: Ջրին վերագրել են նաև պտղաբերության հատկանիշներ, դրա վառ ապացույցը ժողովրդական պատկերացումների համաձայն «Սասնա ծռեր» դյուցազնավեպի գլխավոր հերոսուհի Ծովինարի՝ ջրից հղիանալն է: Հատկանշական են հատկապես ջրի պաշտամունքին նվիրված հայկական ձկնակերպ վիշապ կոթողները, որոնք հնում դրված են եղել աղբյուրների ակունքների մոտ: Այստեղից էլ գալիս է ջրի ակունքը վիշապի կողմից հսկելու գաղափարը հայկական հեքիաթներում: Ջրի պաշտամունքը այժմ էլ տիրապետող է Արևելքի շատ երկրներում:

Հայաստանի բնությունը գունեղ ու բազմազան է, հայն իր բնույթով փոթորկուն է, և բնականաբար, մեր նախնիները պետք է ունենային բնական տարերքի, ծովերի,

ամպրոպի, փայլակի, անձրևի հովանավոր դիցուհի՝ Ծովինար, որ հայ դիցաբանության մեջ հանդես է գալիս նաև Ծովյան, Նար, Նուրի, Հուրի անուններով: Ծովինարը հրեղեն էակ է, ցասումնալից կին: Մինչ օրս ամպրոպի ժամանակ հայոց գյուղերում ասում են՝ Ծովյանն է պտտում… Հավանաբար, նա հայոց մեջ հանդես է եկել նաև եռաժանիով, ինչպես հունական Պոսեյդոնը, Ծովինար աստվածուհին ամեն անգամ, երբ խառնել է երկինքը՝ որոտ, կայծակ, փոթորիկ է տեղացել երկրի վրա: Հայոց ավանդություններում Ծովերի տիրուհին հաճախ հանդես է գալիս նաև հրեղեն ձիուն հեծած: Համաձայն մեկ այլ ավանդության՝ Ծովինարը երկնքի քմահաճ տիրուհին էր, սիրում էր ամպերի հետ մատներով խաղալ՝ երկրի վրա մե՛կ բարեբեր անձրև, մե՛կ ավերիչ փոթորիկ առաջացնելով: Սակայն միշտ չէ, որ Ծովինարը ցասում է արտահայտել: Նա նաև կենարար անձրևի հովանավոր աստվածուհին է, և մեր նախնիներն ամեն անգամ անձրևի ժամանակ փառաբանել են Ծովինար աստվածուհուն: Ծովինարին նվիրված շատ ծեսեր են եղել, որոնք հայերը, չնայած եկեղեցու արգելքին, պահպանել ու կատարել են մինչև XX դարի երկրորդ կեսը: Ծովինարին նվիրված ծես էր Նուրի-Նուրի խաղը: Քանի որ քրիստոնեության մուտքից հետո հին աստվածներին նվիրված ծեսերն արգելվեցին, ժողովուրդը հին աստվածների պաշտամունքը պահպանեց կենցաղային իրերի, տիկնիկների ձևով: Ծովինար-Նուրին պատկերված է որպես տիկնիկ, որի աչքերից կաթիլներ են թափվում: Նուրին անձրևի հովանավոր աստվածուհին էր, ուստի երաշտի ժամանակ գյուղացիները Նուրի տիկնիկի հետ շրջում էին տնետուն, որպեսզի նա անձրև պարգևի մարդկանց: Նուրիի շապիկը լուսակերտ էր ու նկարազարդ, իսկ մեջքի գոտին՝ ծիածանակերպ: Նուրիի ծիսակատարությունը տարածված էր Հայաստանի շատ գավառներում:

-Նուրի-Նուրին էկել ա,
Շիլա-շաբիք հագել ա,
Կարմիր գոտին կապել ա,
Ձու բերեք թաթին դնենք,
Եղ բերենք՝ սրտին քսենք…

Սրտին քսել՝ նշանակում է սիրաշահել:

Ծովինարի կերպարն արտացոլված է նաև հայոց ազգային էպոսում՝ «Սասնա ծռերում»: Նա Սասնա դյուցազուն նահապետների՝ Սանասարի և Բաղդասարի մայրն է: Ի դեպ, էպոսում Ծովինարը հղանում է առանց կենակցման ակտի, ջրից՝ կախարդական աղբյուրից մի բուռ ու կես ջուր խմելով: Հայոց էպոսի հիմքում, փաստորեն, հենց Ծովինարն է, որ առանց

տղամարդու, ջրից հղանալով, ծնում է Արարատ երկրի երկու հսկաներին՝՝Սանասարին և Բաղդասարին՝ Մեծ Սարին և Փոքր Սարին (Մեծ ու Փոքր Մասիսները): Գուցե մեր էպոսի հիմքում աշխարհաստեղծման, արարման գաղափա՞րն է սույնով դրված: Ի դեպ, Ծովինարի պաշտամունքը տարածված է եղել նաև հայերի շատ դրկիցների մոտ:

Մեկ այլ դրվագում, երբ եղբայրները լսում են մորը (Ծովինարի երազը) և հեռանում Խալիֆից , չորս օր հետո դուրս են գալիս նրա հողից: Մտնում են մի նեղ ձոր, և տեսնում, որ մի մեծ գետ է անցնում այնտեղով, ու մեկ բարակ առու բարձրից իջնում է , կտրում գետը, այն բաժանում մեջտեղից, ապա խառնվում է այդ գետին ու հոսում: Նրանք պարզում են, որ այդ ջուրը դյուցազունների ջուր է , ով որ խմի, կհզորանա, և ոչ ոք նրան հաղթել չի կարողանա: Նրանք որոշում են գտնել այդ ջրի ակը և այնտեղ հիմնել իրենց քաղաքը: Նրանք բերում են մեծ-մեծ քարեր և սկսում բերդ սարքել: Սա փաստում է ջրի կարևորությունը և նրա խորհրդանշական դերը: Կամ , մի օր Սանասարը որոշում է , որ գնան ծովի ափ և ձի գտնեն իրենց համար: Երբ հասնում են ծովին,Սանասարը առաջարկում է մտնել ջուրը: Բաղդասարը հրաժարվում է, մնում է ծովափին, իսկ Սանասարը մտնում է ջուրը:Նա սոզվում է ծովի հատակը, լողանում Կաթնաղբյուրի ջրով, ավելի հզորանում: Ծովից նա դուրս է բերում իր հրեղեն ձին ու զենքերը՝Քուռկիկ Ջալալին, Թուր Կեծակին և Խաչ Պատերազմին կեցուցիչը(կենարար, կյանք, կենդանությունը պահպանող, փրկիչ): Այսինքն՝ ամեն բան ջրածին է: «Մեծ Միհր՝ ճյուղում, երբ Միհրը գնում է Խլաթ, հասնում է մի աղբյուրի մոտ, ուր հսկում էին երկու դև: Նա սպանում է դևերից մեկին, մյուսին՝ վիրավորում: Սա դիմում է փախուստի: Միհրը խմում է աղբյուրի ջրից ու գնում վիրավոր դևի արյան հետքերով, սպանում դևին և փրկում Արմաղանին:

Ջրին զուգահեռ էպոսում կա նաև հուրը: Չէ-որ Սանասարին և Բաղդասարին Մելիքսեթ քահանան մկրտում է կրակի վրա: Սակայն հետաքրքրական է, որ կենարար ջուրը կարող է իր մեջ ամփոփել նաև հուրը, պահ տալ նրան, օկ՝ Կաթնաղբյուրից հանված Թուր Կեծակը, Քուռկիկ Ջալալին, որոնք հրեղեն էին, բայց պահ տված էին կենարար ջրերում: Կարևորագույն նկատառում պետք է անել այն մասին,որ մեր տիազերավեպում ջուրը խորհրդանշում է տեղեկատվություն (ինֆորմացիա), որից սնվում ու զորանում էին մեր հերոսները: Որովհետև ջուրը հիշողություն ունի, իսկ մեր ուղեղը ու մենք կեսից ավելի կազմված ենք ջրից: Ուր մնաց թե Կաթնաղբյուրցից սնվող հերոսները:

<u>Հետազոտության մեթոդները:</u> Հետազոտության կիրառված մեթոդներն են՝ վերլուծություն, խմբային հետազոտության, դեպքի ուսումնասիրության, վեբ-որոնման, կմախքի գծագիր և այլն:

Անկախ մեթոդների կիրառումից ուսուցիչը պարտավոր է այնպես ներկայացնել հետազոտվող նյութը, որ այն ազդի սովորողի սրտի ու մտքի վրա, լինի ազդեցիկ ու կիրառելի: Պիտի բացատրի , ու կարևոր նախապայման է , որ նա բնագիրը կարդա դանդաղ և ներթափանցի նրա իմաստային խորքերը, որովհետև կենտրոնացած և ուշադիր ընթերցումը երևան է հանում բնագրի դժվար հատվածները և անհասկանալի մասերը դարձնում հասկանալի: Այս դրույթը կարևոր ցուցիչ է նաև ուսուցչի համար: Նա վերցնում է էպոսի կարևոր հատված, դանդաղ կարդում դասարանում և առաջարկում սովորողներին բացատրել , թե ինչպես են հասկանում նրանք այդ հատվածը: Բերում ենք հարմար հատվածը էպոսից, այն պատկերում է Փոքր Միհրի ծնունդը: Բարուրելիս նորածին Միհրին փաթաթում են գութանի շղթաներով, սակայն նորածինն օրորոցում ճմկլոտում է , և շղթաները կտոր-կտոր են լինում.

Դե՞հ, Դավթից ու Խանդութից
Մանդր տղա հո չ'ըլներ…
Տեսան որ՝ Ազնզցորդի' է:
Համա տղան, որ կը լողցուցեն,
Տեսան՝ մեկ ձեռ խուփ է:
Ինչ ճար արին- չարին,
Տղի ձեռ չը բացվավ,
Քաղաք քաղքով չեն կա՛ռնա
Էնոր ձեռ բանա.

Պարզ է,որ սա մարգարեական է: Ուսուցիչը փաստում է , որ Միհրին հետաքրքրում է ոչ միայն իր երկրի , այլև հանուր մարդկության ճակատագիրը: Նա դառնալու է մարդկության չար ուժերի դեմ կռվող խիզախ մարտիկ , ով սակայն փակվելու է Ազռավաքարում՝ մարդկության երջանիկ օրերի հույսով:

«Վեր –որոնում մեթոդը հետազոտության վրա հիմնված ուսումնական գործունեություն է, որի ընթացքում սովորողը ձեռք է բերում գիտելիքները, տեղեկատվությունը հիմնականում ինտերնետային աղբյուրներից, կայքերից: Օրինակ՝ արդյունավետ է թվերի ուսումնասիրման ժամանակ :



«Քառաբաժան՝

1.Տեսողական պատկերներ

1.Գագիկ թագավորն ու կռապաշտ խալիֆը:

2.Երիտասարդ և շատ գեղեցիկ Ծովինարը:

3.Ծովինարը խմում է հանկարծակի բխած աղբյուրի ջրից:

2.Երկու հիմնական արտահայտություն

1.Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսըվիմ:

2.Մերն ասաց բահանային.

-Իմ տղաներին դաս տուր `կարդան:

3.Հիմնական գաղափար

Հայրենիքի ճակատագիրն ավելի կարևոր է, քան անձնական կյանքը:

4.Զգացում

1.Հպարտություն Ծովինարի անձնազոհ արարքի համար:

2.Ծովինարը շատ գեղեցիկ է և խորագետ:

Եզրակացություն

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ՝էպոսում ուսումնասիրվող նյութը ձևավորում է կայուն արժեհամակարգ և սովորողի մոտ *զարգացնում ինքնաճանաչողական, լեզվական, սովորել սովորելու, ժողովրդավարական, մշակութային, մաթեմատիկական, մեդիա կարողություններ*, որոնք էլ ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժի ուշադրության կենտրոնում:

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը անկասկած շատ մեծ նշանակություն ու հետաքրքրություն ունի սովորողի և հայ մարդու համար: Խոսքը գնում է ազգային արժեհամակարգի , պատմության , սկզբունքների, մտածողության, դրանց կարևորության ընկալման մասին: Այն արժեհամակարգը, որը ձևավորվում է էպոսը ուսումնասիրելիս ապահովում է ազգային մտածողության կայունությունը: Ճիշտ է, հանրակրթական բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր առարկաները, բայց աղգային տեսակի ճանաչման հարցում հատկապես՝ հայոց լեզու, գրականություն և պատմություն առարկաները:

Սովորողները «Սասնա ծռեր» էպոսն ուսումնասիրելիս ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժբախտություններին ու բացթողումներին: Նրա ուսումնասիրման շնորհիվ սովորողի մոտ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող հայ մարդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող , հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ և քաղաքացի: Այդ իսկ պատճառով այն արժեհամակարգը, որը ձևավերվում է էպոսի վերլուծության արդյունքում, օգնում է լուծել ժամանակակից դպրոցի գերխնդիրը՝սերը դեպի ազգայինը:

Յուրաքնչյուր աշակերտ պետք է իմանա, թե որպես հայ ո՞րն է իր անելիքը այստեղ՝ հայրենիքում: Էպոսը հստակ ուղղություն է տալիս դեպի ազգային գաղափարախոսություն: Եվ հենց այդ գաղափարախոսությունը պետք է հուշի պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը իրական սիրով հայրենիքը սիրելն է: Դրա համար էլ կրթությունը պիտի հենք հանդիսանա և յուրաքնչյուր ուսումնասիրվող նյութի մեջ ձևավորի խելացի, տեղեկացված, սեփական ազգը ճանաչող ու ստեղծարար մարդու: Իսկ առանց այդ ամենի՝ ազգային և համամարդկային արժեհամակարգի ընդհանրական չափանիշների, ոչինչ չի

կարող առաջընթաց ապրել: ***«Սասնա ծռեր» էպոսը մեզ թույլ է տալիս ձևավորել այնպիսի արժեհամակարգ, որը ունի ազգային , հոգևոր-բարոյական ընդհանրություններ: Իսկ այս ամենի հիմքը ազգային ինքնաճանաչում ունեցող մարդն է:***

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.«Սասունցի Դավիթ» ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ, Երևան ,1939

2. Լ. Մելքոնյան, Ս. Հակոբյան «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին նվիրված հոդվածներ 1938-1939թթ

3.Աստվածաշունչ,1939թ.

4.Քուրմ Մանուկ (Հայ Արիական Միություն), «Լուսանցք »թիվ 11, 2013

5.Հայկ Կիրակոսյան «Գաղտնագիր»

6.Եզնիկ Կողբացի, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1986թ

7.Հր. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, հ. Դ Երևան 1979